

Տեխնիկական պահանջներ միջազգային գիտաժողովի նյութերի հրատարակման

Հոդվածի ձևավորման պահանջներն են՝

- Ներկայացնել doc ֆորմատով,
- Ծավալը՝ առավելագույնը 8 էջ,
- Էջերի չափերը՝ 16x23.5,
- Էջի լուսանցքները՝ վերև 2սմ, ներքև՝ 2,5սմ, ձախ՝ 2սմ, աջ՝ 2սմ (առանց ոճական ձևավորումների),
- Պարբերության սկիզբը՝ 1սմ լուսանցքից աջ,
- Տառատեսակը՝ GHEA Grapalat,
- Տառաչափը՝ 11,
- Միջտողային տարածությունը՝ 1,5,
- Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը՝ «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները ներկայացնել նկարի տեսքով՝ 10 pt տառաչափով:
- Առանց կրկնակի բացատների և տողադարձերի,
- Էջերը՝ համարակալված,
- Աղյուսակները՝ Word ֆորմատով,
- Բոլոր նկարները՝ հստակ (300dpi tif կամ jpg ֆորմատով),
- Չի ներկայացվում օգտագործված գրականության ցանկ,
- Հղումները ներկայացնել վերտողային համարակալմամբ, որը կապակցված է տողատակային (footnote) աղբյուրագիտական գրառման հետ:

Հոդվածները ներկայացնել հայերեն (առանց օտար լեզուներով ամփոփումների):

Հոդվածում գլխադրանքով և թավ նշվում է՝

- Հեղինակի ազգանուն, անուն, հայրանուն** (ամբողջական):
- Հեղինակի մասին տեղեկություններ**՝ գիտական աստիճան, գիտական կոչում, ամբիոն, զբաղեցրած պաշտոն, կազմակերպության լրիվ անվանում, էլ.հասցեն, հեռախոսահամար:
- Հոդվածի վերնագիր** (կենտրոնում, մեծատառերով): Վերնագիրը ծավալուն չէ:
- Հիմնաբառեր**: Առանձին տողով ներկայացվում են հոդվածում կիրառվող հիմնաբառերը, բառակապակցությունները (առավելագույնը 7 բառ և բառակապակցություն՝ իրարից ստորակետով անջատված):
- Ներածություն**: Այստեղ հիմնավորվում է ուսումնասիրման առարկայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական նպատակը, տեսական և գործնական հիմքերը, առաջադրվող վարկածը,
- Հիմնական մաս**: Վերլուծվում են հետազոտության թեմայով նախկինում կատարված գիտական հրապարակումները, արդի մոտեցումները, հեղինակ(ներ)ի կատարած ուսումնասիրությունը, տեսակետները,
- Ամփոփիչ մաս**, որը բովանդակում է հետազոտության արդյունքները՝ եզրահանգումները, տեսական և գործնական նշանակություն ունեցող առաջարկությունները, գիտական նորույթ պարունակող խնդրի լուծումը, հաստատված վարկածը, կանխատեսումները:
Անհրաժեշտ է նաև ներկայացվող գիտական զեկուցման մասին կարծիք կամ համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:
Գիտաժողովի ծրագրում կներառվեն պահանջներին համապատասխանող զեկուցումները:
Մանրամասների համար խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374- 10 52 20 20/207 կամ գրել հետևյալ էլեկտրոնային փոստին (info_intrel@bryusov.am):

**Շնորհակալություն համագործակցության համար:
Միջազգային գիտաժողովի կազմկոմիտե**